

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Արտավազդ Նազարեթյանին Բելառուսի հանրապետություն գործուղելու մասին  
ՀՀ Վարչապետի 3 մայիսի 2019 թվականի N 490-Ա որոշման կատարման  
վերաբերյալ*

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի Շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության պետ Արտավազդ Նազարեթյան,

Գործուղվել է՝ Բելառուսի հանրապետություն, ք.Մինսկ 2019թ-ի մայիսի 15-16-ը ներառյալ ,

Հրավիրող կողմը՝ Բելառուսի հանրապետության ճարտարապետության և շինարարության նախարարության <<Շինարարության գնագոյացման գիտատեխնիկական հանրապետական կենտրոն>> հանրապետական ունիտար ընկերություն ,

Գործուղման նպատակը՝ մասնակցելու <<BIM- տեխնոլոգիաները և դրանց իրականացումը. շինարարության արժեքի գնագոյացումը >> խորագրով VI Միջազգային գիտագործնական կոնֆերանսին ,

Մասնակցում էին 10-երկրների՝ Բելառուսի, Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի, Ղազախստանի, Թուրքմենիայի, Լիտվայի, Տաջիկստանի, Գերմանիայի և Թուրքիայի հանրապետությունների ներկայացուցիչները,

Գործուղման նպատակը՝ Հայաստանի հանրապետությունում քաղաքաշինության ոլորտում BIM- տեխնոլոգիական համակարգի ( շինարարության տեղեկատվական մոդելավորում – ՇՏՄ ) ներդրման և շինարարության արժեքի գնագոյացման նոր մեթոդաբանության մշակմանն ուղղված քայլերը ԱՊՀ երկրներում ներդրված մեթոդաբանության հետ ներդաշնակեցման և միջազգային փորձի կիրառման ու տեղայնացման հնարավորությունները ուսումնասիրելու համար,

Քննարկված թեմաները՝ ընդհանուր առմամբ ոլորտի բարեփոխումներին վերաբերող 35- ելույթներում արծարծված թեմաներ, այդ թվում՝ շինարարությունում գնագոյացումը և տեղեկատվական տեխնոլոգիաների մոդելավորումը ԱՊՀ մասնակից երկրներում ինչպես նաև Գերմանիայում և Թուրքիայում ; BIM մոդելավորման կիրառմամբ շինարարության նախահաշիվների աուդիտի իրականացում; BIM-ի ներդրման իրավական , տեխնիկական և կազմակերպչական հիմքերը; BIM-ի ներդրման չինական փորձը Բելառուսում նախագծանախահաշիվային փաստաթղթերի մշակման համար; BIM-ի ներդրման հնարավոր խոչընդոտները; BIM-ի -ի և օրացուցա-ցանցային

պլանավորման ներդրմամբ շինարարության բյուջետավորումը; շինարարության գնագոյացման մեթոդաբանության բարեփոխման ուղիները և նման այլ թեմաներ:

Հայաստանի հանրապետությունից մասնակցում էին նաև ՀՀ փոխվարչապետի խորհրդակցական Ավետիք Էլոյանը և Հայաստանի Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի դասախոսներ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Ղուլյանն ու Հասմիկ Հակոբյանը: Կոնֆերանսում Հայաստանը ներկայացավ ողջույնի խոսքով և <<Նախահաշվային նորմատիվային բազայի մոդեռնիզացման խնդիրները Հայաստանում >> զեկույցով:

Առանձին հանդիպումներ են կազմակերպվել Բելառուսի, Ուկրաինայի հանրապետությունների և Graphisoft , Autodesk ընկերությունների ներկայացուցիչների հետ: Քնարկվել է Հայաստանում BIM-ի ներդրման ճանապարհային քարտեզի և նախապատրաստական փուլում անհրաժեշտ իրավական և նորմատիվային դաշտի ստեղծման քայլերը: Հանդիպման մասնակիցները իրենց պատրաստակամությունն են հայտնել օժանդակելու Հայաստանում քաղաքաշինության ոլորտում BIM-համակարգի ներդրման գործում:

Տեղեկացնում ենք, որ շինարարության գնագոյացման և քաղաքաշինության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերին կոնֆերանսի մասնակից երկրները անդրադարձել են ԱՂՀ երկրների միջկառավարական հանձնաժողովի ինը նիստերում և միջազգային գիտագործնական վեց կոնֆերանսներում: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը նման միջոցառումների մասնակցեց առաջին անգամ և շինարարությունում գնագոյացման հարցերի լուծման և BIM տեխնոլոգիական համակարգի ներդրման գործընթացը դեռևս հանրապետությունում չի մեկնարկել, իսկ հապաղելը կնշանակի զրկվել տնտեսության զարգացման կարևորագույն մի գործիքից, որն ըստ մասնագետների համոզմամբ ոլորտում կարող է տալ 30% էֆեկտիվություն, ինչպես նաև կապահովի միջազգային ներդրումային գործընթացներում երկրի ակտիվ ու արժանավայել մասնակցությունը, առաջարկում ենք՝

1. Մշակել քաղաքաշինության ոլորտում շինարարության գնագոյացման և BIM տեխնոլոգիական համակարգի ներդրման ծրագրային փաթեթ և այն ներառել ՀՀ կառավարության միջոցառումների տարեկան ծրագրերում. (կատարողներ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան),
2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեին կից ստեղծել շինարարության գնագոյացման գիտատեխնիկական կենտրոն ( նման կառույցներ գործում են Բելառուսում, Ղազախստանում Տաջիկստանում, Թուրքիայում ),

3. Աջակցել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին քաղաքաշինության ոլորտում BIM տեխնոլոգիական համակարգի ներդրման ճանապարհային քարտեզի մշակման գործում
  
4. Ապահովել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ակտիվ մասնակցությունը ԱՊՀ մասնակից երկրների շինարարության գնագոյացման հարցերով միջկառավարական հանձնաժողովների նիստերին և քաղաքաշինության ոլորտին առնչվող միջազգային գիտատեխնիկական միջոցառումներին:

20.05.2019թ.



Ա.Նազարեթյան